ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--- հուլիսի 2022 թվականի №---Ա
ք. Երևան

«ՀՐԱԶԴԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՐԱԶՋԷԿ)» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ «Տ-ՄԵՏԱԼ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆԵՐԴՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2022 թվականի հունիսի 13-ի №160 և հուլիսի 4-ի №172 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերությանը պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Գործարանային №1 հասցեում գտնվող ոչ բլոկային մասից՝ 8,31309 հա մակերեսով հողատարածքը (այսուհետ՝ Հողատարածք), Հողատարածքի վրա գտնվող կաթսատուրբինային արտադրամասի շենքը (գլխավոր մասնաշենքը) և վարչակենցաղային մասնաշենքը, ինչպես նաև Հողատարածքի վրա գտնվող կաթսատուրբինային արտադրամասի տարածքում գտնվող շարժական գույքերը «Տ-Մետալ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում ներդնելու գործարքի կնքմանը՝ վերջինիս կողմից լրացուցիչ տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց,

բ) ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում են «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ գործարքի համաձայնեցման մերժման հիմքերը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Համաձայնություն տալ Ընկերությանը պատկանող Հողատարածքը, Հողատարածքի վրա գտնվող կաթսատուրբինային արտադրամասի շենքը (գլխավոր մասնաշենքը) և վարչակենցաղային մասնաշենքը, ինչպես նաև Հողատարածքի վրա գտնվող կաթսատուրբինային արտադրամասի տարածքում գտնվող շարժական գույքերը «Տ-Մետալ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում ներդնելու գործարքի կնքմանը:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կարող է կնքվել որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում.
2) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը.
3) անհրաժեշտ է սույն որոշման 1-ին կետում նշված գույքի ներդրմանը համապատասխան՝ «Տ-Մետալ» փակ բաժնետիրական ընկերության կողմից լրացուցիչ տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի նկատմամբ Ընկերության սեփականության իրավունքի ծագման պահից տասնօրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել Հանձնաժողովին:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հուլիսի 2022թ.